

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/5

16 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Լազերքոփի» ՍՊԸ տնօրենի ներկայացուցչի 12.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.12.2015 թ-ի թիվ 310522/02 որոշման դեմ:

«Լազերքոփի» ՍՊԸ տնօրենի ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ներկայացվում է առարկություն ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության 2-րդ բաժնի կողմից ընդունած 28 դեկտեմբերի 2015թ-ի թիվ 310522/02 վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ որոշման դեմ:

Խնդիրը կայանում է նրանում, որ ստացվել է ծանուցում առ այն, որ «Լազերքոփի» ՍՊԸ-ի տնօրեն Հարություն Մուրադյանը սահմանված ժամկետում ՀՏ չի ներկայացրել 3-րդ եռամսյակի ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվություն: Տվյալ ծանուցումը ստանալուց հետո գրավոր մեկից ավելի անգամ դիմում է ներկայացվել ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության 2-րդ բաժնի մանրամասն ներկայացնելով այն փաստը, որ ընկերության կողմից ներմուծված 4802 և (կամ) 4810 ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքները նախատեսված են բացառապես ներտնտեսական կարիքների բավարարման նպատակով, այլ ոչ թե իրացման: Այսինքն, «Լազերքոփի» ՍՊԸ-ն չի հանդիսանում վերը նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքներ ներմուծող և իրացնող, որպեսզի ներկայացնի 1 ապրիլի 2002 թվականի թիվ 299 Որոշմամբ սահմանված ապրանքների, արտադրանքի (օգտակար հանածոյի) արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունը: Այսպիսով՝ ստացվում է հետևյալը, որ ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության 2-րդ բաժնին անտեսել է ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջը, այն է՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու դեպքերը և կարգը: Այսինքն՝ պատասխանատվության են ենթարկել այն պարտականությունը չկատարելու համար, որը ոչ մի իրավական ակտերով սահմանված չէ: Այլ կերպ ասված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ արարքի սուբյեկտիվ կողմի մեղքի բացակայության պատճառով, ինչպես նաև վերը նշված որոշումը կայացնելիս չի պահպանվել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված կանոնը՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության 2-րդ բաժնի կողմից 28 դեկտեմբերի 2015թ-ին ընդունած թիվ 310522/02 վարչական ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 28.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Լազերքոփի» ՍՊԸ տնօրեն Հարություն Մուրադյանը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի 3-րդ եռամսյակի ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 28.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 310522/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Հարություն Մուրադյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Լազերքոփի» ՍՊԸ կողմից ներմուծված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքները նախատեսված են եղել բացառապես ներտնտեսական կարիքների համար, այլ ոչ թե իրացման:

ՀՀ կառավարության 01.04.2002 թ-ի թիվ 299 Որոշման թիվ 1 Հավելվածի 2-րդ կետի համաձայն. «Սույն կարգի դրույթները տարածվում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում նշված օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանքներ արտադրողների և ներմուծող-իրացնողների վրա»:

Նույն Հավելվածի 3-րդ կետի համաձայն. «Սույն կարգի իմաստով օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների, ապրանք արտադրող և ներմուծող-իրացնող են համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) հարկ վճարողները, որոնք արտադրում կամ ներմուծում-իրացնում են սույն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքները»:

Տվյալ դեպքում «Լազերքոփի» ՍՊԸ-ն չի բավարարել ՀՀ կառավարության 01.04.2002 թ-ի թիվ 299 Որոշման թիվ 1 Հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջներին, հետևապես ապրանքների, արտադրանքի (օգտակար հանածոյի) արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու պարտականություն, ընկերությունը չի կրել:

Բացի այդ, որ եթե անգամ համարենք, որ ընկերությունը կրել է վերոգրյալ հաշվետվությունը ներկայացնելու պարտականություն, ապա այս դեպքում ևս Որոշումը ենթակա է բեկանման, քանի որ կայացվել է «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի դրույթների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

ՀՀ կառավարության 01.04.2002 թ-ի թիվ 299 Որոշման թիվ 1 Հավելվածի 4-րդ կետի համաձայն. «Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև հաջորդող ամսվա 20-ը ներառյալ սույն որոշմամբ հաստատված ցանկերում ընդգրկված ապրանքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին»:

Քննարկվող դեպքում 2015 թ-ի 3-րդ եռամսյակի համար ապրանքների, արտադրանքի (օգտակար հանածոյի) արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների ու գների վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված է համարվում 2015 թ-ի հոկտեմբերի 21-ին, սակայն Որոշումը կայացվել է 28.12.2015 թ-ին՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.12.2015 թ-ի թիվ 310522/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ